ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Թեմա «Տեխնոլոգիա» առարկայի «Կարպետագործություն» թեմայի դասավանդման մեթոդիկան 6-րդ դասարանում

Կատարող Հակոբյան Արմինե Արսենի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար տեխ. գիտ. թեկն. դոցենտ Նունե Օրդյան
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Մաս 1. Հանրակրթության նոր չափորոշչով սահմանված «Մշակույթային կարողունակությունը» 4

Մաս 2. Կարպետագործության տեղը հայկական մշակույթում 7

2.1. Պատմական ակնարկ կարպետագործության մասին 7

2.2. Կարպետագործության նյութերն ու գործիքները 8

2.3. Կարպետ հինելը 11

Մաս 3. «Կարպետագործություն» թեմայի դասի պլան 13

Եզրակացություններ և առաջարկություններ 15

Օգտագործված գրականության ցանկ 16

Ներածություն

2021թ. փետրվարի 4-ին Կառավարությունը հաստատեց հանրակրթության նոր չափորոշիչը[1]: Հանրակրթության նոր չափորոշիչն իր սկզբունքային մոտեցումներով, կառուցվածքով և բովանդակությամբ տարբերվում է նախկինից: Ամբողջ փաստաթղթի հիմքում ընկած է կարողունակությունների (կոմպետենցիաների) վրա հիմնված կրթության բովանդակության կառուցման մոտեցումը, ինչը համահունչ է աշխարհի շատ երկրների կրթական համակարգերի զարգացման ժամանակակից միտումներին: Չափորոշչով որպես գերագույն նպատակ սահմանվել է 8 առանցքային կարողունակությունների ձևավորումը: Նոր չափորոշչի գլխավոր նորությունն այն է, որ այն կրթության բովանդակության կառուցման առարկայական մոդելից անցում է ապահովում կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելի:

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է հետազոտել «Տեխնոլոգիա» առարկայի «Կարպետագործություն» թեմայի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանում և վեր հանել դրա ազդեցությունը սովորողների մշակույթային կարողունակության ձևավորման վրա:

Խնդիրներն են՝

1. Վերլուծել և ուսումնասիրել կարպետագործության պատմությունը:

2. Վերլուծել «Տեխնոլոգիա» առարկայի 6-րդ դասարանի դասագրքի «Կարպետագործություն» թեման և դասավանդման առանձնահատկությունները:

3. Հետազոտել «Կարպետագործություն» թեմայի ազդեցությունը սովորողների մշակույթային կարողունակության ձևավորման վրա:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Մաս 1. Հանրակրթության նոր չափորոշչով սահմանված «Մշակութային կարողունակությունը»

Ի՞նչ է կարողունակությունը: Կարողունակությունը անհատի ինտեգրալային, համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ: Համաձայն այս սահմանման՝ եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ: Կարողունակությունը նշված բոլոր չորս որակների համատեղ առկայությունն է, և դրանցից որևէ մեկի բացակայությունը թույլ չի տալիս սովորողին կամ քաղաքացուն հաջողությամբ լուծելու իր առջև ծառացած խնդիրները[2]:

Ընդունված է համարել, որ կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը ծնունդ է առել ԱՄՆ-ում անցյալ դարի 50-60-ական թվականներին, երբ անհրաժեշտություն էր առաջացել որոշելու ծառայողների աշխատանքի արդյունավետության չափանիշները:

Մեր չափորոշչում ձևակերպվել են հետևյալ 8 առանցքային կարողունակությունները.

- լեզվական կարողունակություն և գրագիտություն,
- սովորել սովորելու կարողունակություն,
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
- թվային և մեդիա կարողունակություն,
- մշակութային կարողունակություն,
- մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
- տնտեսական կարողունակություն:

Մշակութային կարողունակությունը ՀՊՉ-ում սահմանված է հետևյալ կերպ.

---

[2] Հանրակրթության պետական նոր չափորոշիչը (նոր մոտեցումներ, հեռանկարներ) Գ. Մելիքյան,

«սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ»:

Մշակութային կարողունակության նկարագրիչներն են.

Գիտելիք՝

- Ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր:
- Տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթում:
- Ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթում:
- Տարբեր ժամանակաշրջանների հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների փոխկապակցվածությունը:
- Տարբեր կրոնական ավանդույթներում առկա ընդհանրություններն ու տարբերությունները:
- Տարբեր մշակույթներ, մասնավորապես՝ արժեքներ, սովորույթներ և հմտություններ, որոնք հատուկ են այդ մշակույթներին:

- **Հմտություններ**

- Արվեստի որոշ տեսակներում կատարել ստեղծագործական աշխատանքներ:
- Արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտել սեփական գաղափարները:
- Մշակել և իրականացնել մշակութային նախագծեր:
- Քննադատաբար անդրադառնալ իր սեփական աշխարհայացքին՝ որպես բազմաթիվ աշխարհայացքներից մեկին:
- Քննադատաբար անդրադառնալ, թե ժամանակի ընթացքում ինչպես է գաղափարը զարգացել տարբեր մշակույթներում տարբեր ձևերով:

- Հարմարվել տարբեր մշակութային պատկանելիություն ունեցող անձնանց հանդիպելիս և շփվելիս։
- Վերլուծել այլ մշակույթներում առկա տարբեր տեսակետներ։
- Արտահայտել, հիմնավորել և պաշտպանել սեփական տեսակետը և դիրքորոշումը։

Վերաբերմունք

- Արտահայտել կամ վիճարկել սեփական գաղափարները և արժեքները։
- Ցուցաբերել հարգանք և հետաքրքրություն տարբեր մշակույթների նկատմամբ։
- Փնտրել ընդհանուր եզրեր իրենից գաղափարապես և արժեքային համակարգով տարբեր մարդկանց հետ քննարկումներ իրականացնելիս։
- Արտահայտել հետաքրքրասիրություն այլ հավատալիքների, մեկնաբանությունների և մշակութային այլ կողմնորոշումների ու պատկանելիության նկատմամբ։
- Ցուցաբերել տարբեր մշակութային պատկանելիություն ունեցող մարդկանց հետ աշխատելու հետաքրքրություն։
- Ողջունել տարբեր արժեքներ, սովորույթներ և վարքագիծ ունեցող մարդկանց հանդիպելու հնարավորությունները։
- Կարևորել իր՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերել պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում։

Արժեք

- Մշակութային ընկալում և արժևորում։
- Արտահայտել այն կարծիքը, որ հասարակության մեջ մշակութային տարբերությունը պետք է դրականորեն արժևորվի և գնահատվի։
- Արժևորել միջմշակութային երկխոսությունը։
- Ներկայացնել հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում և համաշխարհային մշակույթի դերը համամարդկային արժեքների համատեքստում։

Մաս 2. Կարպետագործության տեղը հայկական մշակույթում

2.1. Պատմական ակնարկ կարպետագործության մասին

Հայկական մշակույթի մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում գորգագործությունը և կարպետագործությունը: Գորգերը և կարպետները հայ հանճարեղ ու արարող մտքի գեղարվեստական խորհրդանիշն են, որոնց վրա դրոշմված են ազգային ու համամարդկային ճաշակը, գեղեցիկի նուրբ զգացողությունը, հայ ժողովրդի պատմությունը, կենսափիլիսոփայությունը, արարող ձեռքի ճկուն իմաստությունը: Գորգերը և կարպետները հայ ժողովրդի ինքնատիպ մշակույթի լավագույն դրսևորումներից են, որոնք համարժեք են քանդակագործությանը և մանրանկարչությանը: Կարպետն ու գորգը հայ ժողովրդի կենցաղում հնուց ի վեր եղել և մնում են կենսական անհրաժեշտություն: Այդ գործվածքները ոչ միայն կիրառական արժեք են ունեցել, այլև եղել են ինքնաարտահայտման միջոց: Հայ գորգագործը գորգը հյուսել է որպես իր օջախի ամենաթանկ և փայփայած իր, այն դարձրել սրբացած տոհմանշան: Ավանդական գեղեցիկ ուրվագծերը, ինքնատիպ զարդանախշերը, դրանց պաճուճական միահյուսությունները ձեռագործ գորգերի վարպետների վառ երևակայության ակնառու վկայությունն են: Հայերենում «գորգ» և «կարպետ» բառերն օգտագործվում են որպես հոմանիշ բառեր՝ միայն այն տարբերությամբ, որ գորգերն ունենում են թելախավ, իսկ կարպետները՝ ոչ: «Գորգ» բառն առաջին անգամ հիշատակվում է Տավուշի Կապտավանք եկեղեցու պատին եղած արձանագրություններից մեկում (1242-1243թթ.): Հայագետներ Ղափանցյանն ու Ջահուկյանը գտնում են, որ «գորգ» բառը պատկանում է խեթերենի բառաֆոնդին, ուր և հիշատակվում է « kurka» ձևով:Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին ուղղակիորեն գրում է, որ «գորգ» բառը հայկական ծագում ունի և նշանակում է «նախշ»: «Կարպետ» բառն առաջին անգամ հիշատակվում է 5-րդ դարի Ավետարանում գրաբարյան «կապերտ» ձևով: Հայաստանում կարպետագործությունը իբրև արհեստ զարգացած է եղել դեռևս վաղնջական ժամանակներից: Վաղ շրջանում դրանք գործվել են դազգահների վրա՝ ձեռքով, մանուֆակտուրայի զարգացման հետ սկսեցին գործվել հաստոցներով: Պատմական Հայաստանում գորգերն ու կարպետները համարվել են առաջին անհրաժեշտության իրեր, դրանք մեծ պահանջարկ են ունեցել կենցաղում՝ պատրաստել են գոգնոցներ, գլխարկներ, խուրջիններ և այլն: Այս արհեստն այնքան սերտ էր

կապված առօրյա կյանքի հետ, որ այն իմանալը պարտադիր էր: Գրեթե բոլոր բնակավայրերում գործում էին կարպետներ՝ քիլիմներ, ծածկոցներ, վարագույրներ, թամբեր, խուրջիններ, վերմակներ, աղի տոպրակներ, ձիու ծածկոցներ և այլն: Կենցաղային նշանակությունից զատ, գորգերը և կարպետները օգտագործել են ցրտից պաշտպանվելու նպատակով՝ փռել են հատակին, թախտին, աստիճաններին ու միջանցքներում, փակցրել մահճակալներին կից պատին, որպեսզի ընտանիքի անդամը քնած ժամանակ չհենվի պատին:

2.2. Կարպետագործության նյութերն ու գործիքները

Իր գոյության հազարամյակների ընթացքում մարդկությունը թելեր ու գործիքներ է հյուսել թե՛ կենդանական՝ բուրդ, մետաքս, և թե՛ բուսական՝ բամբակ, վուշ, ծագում ունեցող հումքից: Հայկական լեռնաշխարհում կային կարպետագործության զարգացման համար անհրաժեշտ բոլոր նպաստավոր պայմանները՝ բուրդը, բամբակը, վուշը, մետաքսը, դրանք մշակելու և օգտագործելու կուլտուրան:

Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում, կարպետագործների և գորգագործների հիմնական աշխատանքային գործիքներն էին՝ տորքը (դազգահ), մկրատը, կտուտը, դանակը և փոքրսանրը, իսկ հումքի վերամշակնման համար՝ սանդերքը, անեղը, ճախարակը և իլիկը: Այդ գործիքները ժամանակի ընթացքում ավելի ու ավելի են հղկվել, կատարելագործվել: Օրինակ՝ գորգագործական տորքը միշտ չէ, որ այժմյան ուղղահայաց ձևն է ունեցել: Սկզբում այն եղել է հորիզոնական, որը կոչվում էր «գետնագործ» կամ «տափի գործ»: Կարպետագործության համար օգտագործվել է ոչխարի, ուղտի բուրդ, բամբակ, մետաքս:

Այժմ էլ օգտագործվում են նույն թելերը, դրանք ներկվում են հատուկ ներկանյութերով, որոնք երկար տարիներ պահպանում են իրենց գույնը:Դեղին գույնը ստանում են թթի ծառի թեփից, շագանակագույնը՝ ընկույզի կեղևից, բաց շագանակագույնը/օխրա/ ՝ նռան կեղևից, կաթնագույնը՝ անթառամ ծաղիկից, կարմիրը՝տորոնի արմատից, կապույտը՝ ինդիգո բույսից, որը ներկրվում է Հնդկաստանից: Գույնը ամրացնելու համար օգտագործում են շիբ և գինեքար: Այս գույների խառնուրդներից ստանում են մոտ վեցհարյուր երանգ:

Հազարամյակներ շարունակ կարմիր ներկը ստացել են որդան կարմիրի միջատից: Հայկական որդան կարմիրից ստանում էին բոլոր երանգները, սակայն այն հատկապես գնահատվում էր հագեցած կարմիրի և գույնի կայունության համար: Որդան կարմիրի միջատներին անվանում էին արքայական ծիրանի , քանի որ դրանով ներկում էին արքաների գորգերը: «Մեգերյան կարպետ» թանգարանում պահպանվել է գորգ, որի մի մասը տարիներ առաջ վերանորոգվել է քիմիական գունանյութերով ներկված թելերով և տարիներ հետո այդ թելերի գույները խամրել են, իսկ ավելի հնում գործած բնական գույնով ներկված գորգի մյուս մասի գույները պահպանվել են:

Գորգագործության և կարպետագործության գործընթացում օգտագործվում են տարատեսակ գործիքներ և սարքավորումներ: Դրանք ժամանակի ընթացքում քիչ են ենթարկվել փոփոխության: Ժամանակակից սարքավորումները, նույնիսկ դրանց փոքր տեսակները հիշեցնում են հնում օգտագործվող դազգահները:

Տորք (ոստան, հանա) գորգ գործելու մի մեծ սարք է, որի պատկերը հայտնի է 14-րդ դարից: Հայաստանում մինչև XIX դարի 70-ականթվականները համարյա շատ չնչին փոփոխություններով օգտագործվում էր ուղղահայաց սեպավոր հին տորքը:

Կտուտիչ /թելատու, կոթիչ, հովա, քարկիթ/՝ շարքերը նստեցնելու, կտուտելու բազմատամ գործիք է: Կարճ ու կորավուն կոթով բռնակ և ատամնաշարով ավարտվող հարվածող մաս /գլուխ/ ունեցող գործիք է, որի հարվածող մասը լինում է պայտաձև, լինում է փայտից, ոսկրից, մետաղից: Գործիքի կոթից բռնելով՝ գործողը խփում, նստեցնում է գործվածքի շարքերը:

Մկրատ՝ խավը խուզելու և հավասարեցնելու գործիք է՝ զույգ միասայր շեղբերով և բռնակներով: Գործվածքի խավն անհրաժեշտ չափով խուզելու համար գորգագործը մկրատի շեղբին և տակդիրի միջև տեղադրում է համապատասխան բարձրության ներդիրներ, պտուտակներով ձգումամրացնում է դրանք, ապա մի ձեռքով բռնում է բռնակներից, իսկ մյուսով՝շեղբի ելուստներից և խուզում խավը:

Սանր՝ խավը սանրելու և մաքրելու գործիք: Այն 20-30 սմ երկարությամբ և 3-4 սմ լայնությամբ հարթ, բարակ թիթեղ է, որի մի եզրը կարճ ատամնաշարով է: Լինում է ոսկրից և մետաղից: Մինչև խավավոր գործվածքի խավիխուզումը այն սանրումուղղում են և ապասանրում-մաքրում ավելորդ թելերից:

Դանակ՝ գործվող թելը հանգուցելու և կտրելու գործիք: Այն կազմված է շեղբից և կոթից: Շեղբը մետաղից է, միասայր՝ ծայրը եռանկյունաձև կտրվածքով: Կոթը լինում է փայտից կամ մետաղից: Գործող թելը դանակի օգնությամբ հենքաթելեր արանքով անցկացնելով՝ հանգույց են կապում և թելի ավելացած մասը կտրում:

Կարպետագործության և գորգագործության հաջողությունը մեծապես կախված է նաև նյութի մշակման որակից: Օրինակ՝ բուրդը մշակելու համար մեր նախնիները ստեղծել են բազաթիվ գործիքներ և սարքավորումներ:

Թակ՝ բուրդ ծեծելու և լվանալու հարմարանք է: 70-80 սմ երկարությամբ, 10-12սմ լայնությամբ և 4-5 սմ հաստությամբ կորավուն փայտ է: Մի ծայրը բարակեցված է, գլանաձև՝ բռնելու համար: Բուրդը փռում են սալքարին, ջուր լցնում վրան և թակով խփում մինչև մաքվելը:

Սանդերք՝ զզել-սանրելու գործիք է: Այն բաղկացած է փայտե հարթակից, որին ամրացված է 2 միատիպ տախտակ՝ կազմելով եռանկյուն բուրգ: Դրանց գագաթները ամրացվում են ուղղահայաց, հավասար ու սրածայր պողպատե ճաղով, որոնցով ստացվում է սանրաձև 2ճաղաշար: Գործիքի փայտե գագաթն ունենում է մետաղյա ամրագոտի:

Իլիկ /թեշիկ, քարմա/՝թելմանելու և ոլորելու գործիք: Հումքը մանելոլորելու կամ թելը ոլորելու համար մանողը դրա ծայրն ամրացնում է կեռիկից, մի ձեռքով պահում բարակեցված թելահումքի կամ թելի հատվածը, մյուս ձեռքի մատներով կամ ազդրի և ձեռքի ափի շփումով պտտեցնում է իլիկը, ոլորում մյուս ձեռքի ափում բռնած հատվածը և մանած թելը փաթաթում իլիկի ձողին՝մինչև մալանչի ավարտը:

Ճախարակ՝ թելահումքը մանելո և ոլորելու կամ թելը ոլորելու կատարելագործված հարմարանք: Այն կազմված է փայտե պատվանդան-հիմքից, որի միծայրին՝ զույգ հենաթելերի վերնամասի անցքերում, տեղադրված է առանցքաձողով թափանիվը: Թելահումքի մալանչի ծայրը բարակեցվում և կապվում է իլիկից: Թափանիվը աջ ձեռքով պտտելով՝ կատարվում է մալանչիմանումը՝ մինչև թելը անհրաժեշտ հաստության հասցնելը՝ ձախ ձեռքով պահելով այն պտտվող իլիկի ուղղությամբ: Մանված-ոլորված թելի դիրքն իլիկի հանդեպ փոխելով՝փաթաթում են այն, որով ստացվում է ոստ:

2.3. Կարպետ հինելը

Կարպետ գործելու քայլաշարը.

1. Կարպետ հինելը:
2. Հենքաթելի ամրացումը շրջանակի վրա:
3. Հավասարեցնող շղթայի հյուսումը:
4. Հենքաթելերի բաժանումը:
5. ՄԻջնաթելերի անցկացումը:
6. Զարդանախշի և թելերի ընտրությունը:
7. Կարպետի հյուսումն ըստ էսքիզի:
8. Կարպետի վերջնական մշակում:

Կարպետ հինելը

Սովորաբար այսօր կարպետ հինում են դազգահի կամ շրջանակի վրա՝ հատուկ հենքի համար նախատեսված ոլորած թելը դազգահի կամ շրջանակի շուրջը փաթաթելով:

Գոյություն ունի նաև մեկ այլ ձև. շրջանակի վրա որոշ հեռավորությամբ մեխեր են խփում, այնուհետև թելը փաթաթվում է այդ մեխերի վրա: Հենքի համար կարևոր նշանակություն ունի հենքի խտությունը՝ կախված հենքի թելի հաստությունից (օրինակ՝ 10սմ-ի վրա 30-40 թել):

Միջնաթելերի անցկացում

Միջնաթել անցկացնում ենք հիմնականում գորգ կամ գոբելեն գործելիս, քանի որ կարպետը ավելը պարզ գործվածք է, միջնաթել անցկացնելու կարիքը չկա:

Հավասարեցնող շղթայի հյուսում

Շրջանակը կամ դազգահը հինելուց հետո հյուսում ենք ամրացնող շղթան. դրա համար մեզ անհրաժեշտ է վերցնել մի որևէ ամուր, հարթ, ուղղանկյուն առարկա (կլինի դա փայտից կամ ստվարաթղթից) և մեկումեջ անցկացնել հենքի թելերի միջով: Մինչև վերջ անցկացնելուց հետո, փայտը կամ ստվարաթուղթը, իջեցնում ենք ներքև՝ մինչև հպվի շրջանակի փայտին: Այնուհետև վերցնում ենք հենքի թելից և սկսում գործել հավասարեցնող շղթան՝ ձախից աջ:

Զարդանախշի և թելերի ընտրություն

Ըստ նախապես ընտրված զարդանախշի, ընտրում ենք թելերի գույներն այնպես, որ արտահայտվեն նախշի բոլոր արանձնահատկությունները: Ընտրում ենք գույն ֆոնի համար

(հիմնականում մուգ կապույտ, բորդո, դեղնավուն, բաց դարչնագույն) և գույներ զարդանախշի համար այնպես, որ համահունչ լինեն մեկը մյուսի հետ:

Ընտրած գունավոր թելը անցկացնում ենք հենքի թելերով մեկումեջ, գործիքով (պատառաքաղով,սանրով): նստեցնում, հետո հաջորդ շարքի համար նույն թելը անցկացնում ենք հակառակ մեկումեջերով և դարձյալ պատարաքաղով նստեցնում:

Կարպետի հյուսումն ըստ էսքիզի

Կարպետի համար էսքիզը նպատակահարմար է նկարել վանդակավոր թղթի վրա՝ յուրաքանչյուր վանդակում նկարելով կա՛մ պայմանական նշան (օր.՝ x, o, /, +, դրանք հետագայում պետք է փոխարինել գույներով՝ ինչպես օրինակ x-կարմիր, o-կանաչ, /-կապույտ և այլն), կա՛մ արդեն նախապես որոշված գույն: Էսքիզը թղթին նկարելուց հետո հաշվում ենք վանդակների քանակը՝ յուրաքանչյուր վանդակի համար նախատեսելով որոշակի քանակությամբ թելեր (օր.՝ 1 վանդակը =3 կամ 4 թելի): Ի դեպ 2 թելից պակաս չենք կարող նախատեսել: Հաշվում ենք համապատասխան թելերի քանակն ըստ էսքիզի վանդակների և տեղադրում հինած շրջանակի վրա: Անպայման անհրաժեշտ է նախապես հաշվել, գտնել և ֆիքսել հինած թելերի մեջտեղը. եթե կենտ թվով են թելերը, ապա ֆիքսել 1 թել, եթե զույգ թվով են թելերը՝ 2 թել: Նախշը հարմար է տեղադրել և սկսել գործել մեջտեղից:

Մեկ այլ կարևոր խնդիր է գորգի, կարպետի և կարպետագործ իրերի լվացումը՝ դրանք կարող են՝ գունաթափվել, գույները խառնվել կամ խամրել:

Պետք է լվանալ նախապես փորձնական ստուգում անցկացնելով: Նախ պետք է զննել և որոշել, թե գործող թելերից որոնք են ներկված բնական և որոնք արհեստական ներկանյութերով, քանի որ բնական ներկանյութերը բավական կայուն են ջրի նկատմամբ, իսկ արհեստականները՝ ոչ:

Լվանալուց առաջ կարպետն անհրաժեշտ է մաքրել փոշեկուլով, եթե կան պատռված հատվածներ կամ անցքեր պետք է դրանք ամրացնել կոշտ բամբակյա կտորի կարկատաններով («բյազ»), որպեսզի լվանալիս դրանք էլ ավելի չվնասվեն:

Մաս 3. «Կարպետագործություն» թեմայի դասի պլան

Ուսուցիչ՝ Արմինե Հակոբյան

Հ. Հայրապետյանի անվան հ. 78 հիմնական դպրոց

Առարկա	Տեխնոլոգիա
Դասարան և կիսամյակ	6-րդ դասարան
Թեմայի գլուխ և թեմա	Կարպետագործություն
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք *Տեսանյութ կարպետ գործելու մասին,պատմության մասին* թելեր, դազգահ, շրջանակ
Դասի նպատակ	**Զևավորել** • Խթանել հետաքրքրասիրությունը կարպետագործ իրերի նկատմամբ: • Հաղորդել գիտելիքներ կարպետագործության տեսակների մասին, ծանոթացնել կարպետահյուս իրերին: • Ծանոթացնել կարպետ գործելու համար անհրաժեշտ նյութերին, գործիքներին և հարմարանքներին: • Ծանոթացնել կարպետի զարդանախշի տեսակներին Սովորեցնել դազգահի վրա հինելու ձևերը: **Զարգացնել հմտություններ** • Սովորեցնել հենքաթելի վրա կարպետ հյուսելու պարզագույն տեխնիկան: Սովորեցնել հյուսել զոլավոր կարպետ: • Զևավորել կարպետ հյուսելու կարողություններ: • Զարգացնել տարածական պատկերացումները կարպետագործության մասին, դաստիարակել հոգատար, ուշադիր և կոկիկ վերաբերմեունք կատարած աշխատանքի նկատմամբ: **Սոցիալական** • մոտավոր և ճշգրիտ չափումներ կատարելու, արդյունքները գնահատելու կարողություններ, • սեփական տեսակետը հիմնավորելու և պաշտպանելու կարողություններ: • խմբում աշխատելու ունակություն, • միմյանց լսելու, օգնելու, խրախուսելու, արդյունավետ շփվելու հմտություններ
Վերջնարդյունքները	*Նկարագրի կարպետագործության տեխնիկայի ընթացքը և կիրառի գործնականում:* ***Գիտելիք*** 1. Ի՞նչ հումք է օգտագործվում կարպետագործության մեջ:

	2. Ի՞նչ գործիքներ, սարքավորումներ է ստեղծել հայ ժողովուրդը կարպետներ գործելու նպատակով: 3. Ի՞նչ գործիքներ են անհրաժեշտ բուրդը մշակելու համար: 4. Ի՞նչ գիտես որդան կարմիր ներկանյութի մասին: ***Հմտություններ*** • կարողանա ընտրել թելեր կարպետի համար, • կարողանա հինել կարպետ, • կարողանա անվտանգ գործածել գործիքները: ***Վերաբերմունք*** • կարևորի սեփական ուժերով տվյալ թեմայի շրջանակներում հետազոտություն իրականացնելը, • կարևորի ժամանակն արդյունավետ օգտագործման հմտության զարգացումը, • կարևորի ինքնակրթության մեթոդների զարգացումը ***Արժեք*** • արժևորի ձեռք բերված գիտելիքների կիրառման դերը շրջապատող աշխարհում:
Դասի ընթացք/ ընտրված մեթոդ/ներ	ԽԻԿ համակարգ, խոսքային բացատրություն, ցուցադրում, ցուցումներ, հրահանգներ, Վենի դիագրամ, աքրոստիկոս, նյութն ամրապնդող զրույց , գործնական աշխատանք:
Կապը ՀՊՉ-ի հետ	Հ5 - կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս, Հ26 - ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ, Հ28 - դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր, Հ30 - գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ, Հ32 - արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ, Հ46 - դրսևորի աշխատանքային հմտություններ, կարողանա հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր, գործիքներ և նյութեր, Հ51 - կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա:

Եզրակացություններ և առաջարկություններ

Կատարելով այս հետազոտական աշխատանքը հանգում ենք հետևյալ եզրակացություններին՝

- Հայկական մշակութային համակարգի կարևոր ու ավանդական բնագավառների մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում գորգագործական մշակույթը:
- Գորգագործության ուսումնասիրությունը սովորողների մեջ ձևավորում է բարձր գեղագիտական ճաշակ, ստեղծագործական երևակայություն, պատմական գիտելիքների որոշակի պաշար և աշխատանքային հմտություններ:
- Տեխնոլոգիա առարկայի շրջանակներում դասավանդելով «Կարպետագործություն» թեման ուսուցիչը մեծապես նպաստում է աշակերտի մշակույթային կարողունակության ձևավորմանը:
- Ունենալով համապատասխան գիտելիքներ և հմտություններ՝ աշակերտները հետագայում կներկայանան որպես հայ մշակույթի կրողներ՝ նպաստելով հայ մշակույթի պահպանման և տարածման գործին:

Գիտակցելով այն մեծ հոգևոր և ազգապահպան նշանակությունը, որն ունի մեր ժողովրդական դեկորատիվ-կիրառական արվեստը՝ մասնավորապես գորգագործությունն ու կարպետագործությունը, մենք մեզ վրա վերցնում ենք մեծ պատասխանատվություն ուսումնասիրել և տիրապետել դրանք գործելու տեխնիկային, ծանոթանալ մանկավարժության և հոգեբանության գաղտնիքներին, մեթոդներին, սկզբունքներին և արժանավոր կերպով փոխանցել կրտսեր սերնդին:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77183

2. Հանրակրթության պետական նոր չափորոշիչը (նոր մոտեցումներ, հեռանկարներ) Գ. Մելիքյան, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «Լինգվա» հրատ., 2021թ.

3. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, «Տեխնոլոգիա» հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք Եր., Տիգրան Մեծ. 2016:

4. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, «Տեխնոլոգիա» 5-7 դասարանների ուսուցչի ձեռնարկ-Եր. Տիգրան Մեծ, 2014:

6. Ա. Հարությունյան, Ս. Հովսեփյան, Ժ. Ավետիսյան, «Տեխնոլոգիա» գործնական աշխատանքներ, 5-7 դասարաններ, Ուսուցչի ձեռնարկ, «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ» հրատարակչություն. Երևան, 2011:

7. Մ. Ղազարյան, «Հայկական գորգ», 1988թ., Երևան:

8. Տ. Իգիթյան, «Գորգերի արտադրության տեխնոլոգիան», 1952թ., Երևան:

9. Կ. Պապիկյան, «Հայկական կարպետներ և գորգեր», 2009թ., Երևան:

10. Հայաստանի պատմության թանգարան, «Հայկական գորգարվեստ», 2013թ., Երևան:

11. Ֆ. Գանցիորն «Քրիստոնեաարևելյան գորգը», 2013թ., Երևան: